դպրոցի բարձր դասարանի 40 աշակերտուհիների, որոնք առաջիկայ ապրիլի 2-ին ժամանելու են Ս. Էջմիածին։

—Մարտ 25, № 1419—1422. շրջաբերականներով առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահողին, Ղարաբաղի Կոնսիստորիային, Երևանի Հայոց փոխ թեմակալին և Շամախու Առաջնորդին շրջաբերական կարգադրութիւն անել թեմերի քաղաքների եկեղեցիների երեսփոխների անունով, որպէս զի տարուոյս մայիսի 18-ին հանգանակութիւն կատարեն եկեղեցիներում խուլ և համրերի օգտին և ժողոված գումարները ուղարկեն խուլ և համրերի հոգաբարձութեան Տփխիսի բաժանմունքին։

—Մարտ 28, № 1427. Առաջադրութիւն Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով Տ. Սիօն վարդապետը կարգուեց Մայր Աթոռի հիւրատան հիւրընկալ և Տ. Արիստակէս վարդապետն ազատ համարուեց նոյն պաշտօնից՝ այլ և այլ պաշտօնով և պարտաւորութիւնով ծանրաբեռնուած լինելու պատճառով։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Մարտի 2-ին, Թ. 139. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. նոյեմբերի 27-ի, Թ. 8270 յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Աբրահամ Տէր Մինասեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-Թեմակալին ձեռնադրել նորան քահանայ Տաթևի փոխանորդութիւն Շնաթաղ գիւղի համար։

Մարտի 2-ին, Թ. 140. Սինոդը լսելով Շամախու Կոնսիստորիայի 1910 թ. դեկտեմբերի 30-ի Թ. 1717 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Շամախու Կոնսիստորիային ընդունել Տփխիսի բնակիչ Գէորգ Պոպովեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Խաչմազ գիւղի համար։

Մարտի 7-ին, Թ. 155. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. Մայիսի 17-ի, Թ. 3501 յայտարարութիւնը որոշեց. որովհետև Ալէքսանդրապոլի Ս. Փրկիչ եկեղեցու միաբան Մկրտիչ քահանայ Ագուլեանը Ցարութիւն Ասլանեանցին զինուորակոչութեան ժամանակ ցոյց է տուել մեռած, բայց, ինչպէս բացատրուած է գործի մէջ, քահանան այդ արել է թիւրիմացութեամբ և ոչ չահագիտական նպատակով, ուստի բաւականանալ դադարացնելով նրան քահանայագործութիւնից եօթն օրով առ դրան եկեղեցու ապաշխարելու սաղմոսը ձեռքին։ Այս մասին հրամանագրել Երևանի Կոնսիստորիային, պատուիրելով կատարման մասին տեղեկութիւն տալ Սինոդիս։

Մարտի 7-ին, Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1910 թ. յունիսի 26-ի Թ. 2695 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել Սղնախ քաղաքի բնակիչ Յակոբը Գրիգորեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Կոնսիստորիայի նախագահողին ձեռնադրել նրան քահանայ Ցարսկիէ—Կոլոդցի և յարակից գիւղերի համար։

Մարտի 7-ին, Թ. 158. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 թ. դեկտեմբ. 29-ի, Թ. 2145 յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Կարսի Շրջանի Բերդուս գիւղի բնակիչ Աստուածատուր Յովհաննիսեանին հոգևոր կոչման մէջ և ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի համար։

Մարտի 9-ին, Թ. 164. Սինոդը լսելով Ամենապատիւ Տ. Տեղակալի այս տարուայ փետրուարի 26-ի Թ. 1333 առաջադրութիւնը՝ Տփխիսի Թեմի դպրոցների համար թեմական տեսչի անհրաժեշտութեան մասին, որոշեց. յատկացնել տեսչի ռոճկի համար այս տարուանից, ժամանակաւորապէս մինչև այդ պաշտօնի համար յատուկ և որոշ աղբիւրներ գտնելը, Մայր Աթոռի հետևեալ արդիւնքները. ա) Թէլէթի ուխտատեղու արդիւնքից տարեկան Մայր Աթոռ ուղարկել միայն 500 ռուբլի, իսկ արդիւնքի միւս

մասը, նաև Թելէթի վանքի տարեկան եկամտի մնացորդը, վանահօր և վանքի անհրաժեշտ ծախքերը հոգալուց յետոյ, յատկացնել տեսչին ռոճիկ. բ) Բոլնիսի ուխտատեղու արդիւնքից տարեկան ուղարկել Մայր Աթոռ Միայն 300 ռուբլի, մնացածը յատկացնել տեսչին ռոճիկ. և գ) Թեմի Մաղկեվանք ուխտատեղու ուխտի օրուայ արդիւնքը ուղարկել Մայր Աթոռ, իսկ տարեկան միւս եկամտի արդիւնքի մնացորդը, եթէ լինի տարուայ վերջը, ծախքերը դուրս գալուց յետոյ, յատկացնել տեսչին ռոճիկ։ Այս վճռի կատարման համար հրաման տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահողին։

Մարտի 9-ին, Թ. 167. Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահողի այս մարտի 2-ի Թ. 211 յայտարարութիւնը Տփխիսի աթոռապատկան մի քանի կալուածների մասին, որոշեց. նախ՝ թոյլ տալ Տփխիսի Աթոռապատկան կալուածների կառավարչին վաճառել Շուբնի րեագի փոքրիկ գետինը մինչև 300 ռուբլով և երկրորդ՝ պատուիրել նրան նախահաշիւ և նախագիծ ներկայացնել Սինոդիս Արմեանակի բազարի Մայր Աթոռի հողի վրայ նոր շինութիւն կառուցանելու համար։

Մարտի 14-ին, Թ. 177. Ներքին Գործոց Նախարարը փետրվարի 22-ին, Թ. 1613 առաջադրութեամբ յայտնում է Սինոդին, որ Եգոր Բաբովը կտակել է յօգուտ Ներսիսեան Հոգևոր դպրոցի 2000 ռ. Տփխիսի Երջանային գատարանը 1909 թուին հաստատել է այդ կտակը, ուստի և ինքը Պ. Նախարարը թոյլ է տալիս ընդունել կտակուած գումարը և անել առ այդ պատշաճ կարգադրութիւն։ Սինոդը լսելով Պ. Նախարարի այս առաջադրութիւնը, որոշեց. Ներքին Գործոց Նախարարութեան յիշեալ առաջադրութեան պատճէնը ուղարկել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ի տնօրէնութիւն, և ի տեղեկութիւն Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեան։

Մարտի 14-ին, Թ. 179. Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1910 թ. դեկտեմբերի 7-ի, Թ. 5726

յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային ընդունել Արամ Տէր Անդրէասեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել կոնսիստորիայի նախագահողին ձեռնադրել նրան քահանայ Բօլնիս—Թաչէն գիւղի համար։

Մարտի 14-ին, թ. 181. Սինոդը—լսելով Վլադիկաւկազի Երջանային Դատարանի պրոկուրորի անցեալ փետրուարի 4-ի, թ. 2025 գրութիւնը, որով յայտնում է, թէ Մոզդոկի քաղաքացի Մարիամ Սիդորովան կտակել է Մոզդոկի հայոց Ս. Աստուածածին եկեղեցուն իւր Մոզդոկում ունեցած բոլոր շարժական և անշարժ գոյքի, հողերի և շինութիւնների վաճառումից գոյացած գումարը, աւելացնելով դորա վերայ իւր բոլոր առձեռն և պարտք տուած դրամները, նմանապէս դրամատներում ունեցածները,—որոշեց. պատուիրել Աստրախանի Կոնսիստորիային, ուղարկելով կտակի պատճէնը, յանձնարարել Մոզդոկի Հայոց եկեղեցիների ծխական Հոգաբարձութեան իրագործել հանգուցեալ Մարիամ Սիդորովայի կամքը։

Մարտի 16-ին, թ. 191. Սինոդը լսելով ի Տէր հանգուցեալ Կաթուղիկոսի 1910 թ. հոկտեմբերի 21-ի, թ. 2272 կոնդակը, որոշեց Դաշքուռուն գիւղացի Աբէլ Աբրահամեանցին իւր խնդրի համեմատ ընդունել հոգևոր կոչման մէջ, իբրև Մայր Աթոռի միաբան։

Մարտի 18-ին թ. 203. Սինոդը լսելով Ամենապատիւ Տ. Տեղակալի ամսոյս 3-ի թ. 1346 առաջադրութիւնը, որոշեց. Ամենապատիւ Տ. Տեղակալի առաջադրութեան համաձայն տալ հրաման Սինոդիս անդամներ Տ. Տ. Սահակ, Մաթէոս և Բաբգէն վարդապետներին, Կառավարչական Մասի գործավարին և մատենավարին փութալ կազմել Մայր Աթոռի և թեմերի բոլոր վանական կալուածների և գոյքի ընդհանուր ցուցակը, ցուցակագրել նաև բոլոր վանքերի, հոգևոր հաստատութիւնների և դպրոցների անշարժ կալուածների մակարդակները յատուկ պահարանում պահելու համար։

Մարտի 21-ին, Թ. 219. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի 1910 Թ. Նոյեմբերի 11-ի, Թ. 7887 յայտարարութիւնը, որոշեց. Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Ալէքսանդրապոլի գաւառի աղբուլաղցի Ղազար Խաչատրեանին հոգևոր կոչման մէջ և յանձնարարել Փոխ-Թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Գէորգեսխուշ գիւղի համար.

Մարտի 21-ին, Թ. 217. Սինոդը լսելով Գանձակի Նահանգապետի 1910 Թ. Սեպտեմբերի 16-ի, Թ. 22117 գրութիւնը Նուխի քաղաքի վերաբնակիչ Կարապետ Սարգսեանի Հայ-Լուսաւորչական դաւանութիւնից մահմեդական դառնալու մասին, որոշեց. ի նկատի առնելով, որ նախ՝ տիրող օրէնքներով արգելւում է քրիստոնեայ դաւանութիւնից անցնել մահմեդականութեան, և երկրորդ՝ որ Սարգսեանը յարուցել է այդ միջնորդութիւնը թերևս զինուորական ծառայութիւնից խոյս տալու նպատակով, ուստի Կարապետ Սարգսեանի յարուցած միջնորդութիւնը թողնել առանց հետևանքի, որի մասին և յայտնել նորան Ղարաբաղի Կոնսիստորիայի ձեռքով և տեղեկութիւն տալ Գանձակի Նահանգապետին.

Մարտի 30-ին, Թ. 234. Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի անցեալ Յունվարի 11-ի, Թ. 201 յայտարարութիւնը, որոշեց. Թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Ալեքսանդրապոլի գաւառի Գիւլիբուլաղ գիւղացի Վարդևան Բարդուղիմէոսեանին հոգևոր կոչման մէջ և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար.

Մարտի 30-ին, Թ. 235. Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1910 Թ. սեպտեմբերի 27-ի, Թ. 4483 յայտարարութիւնը, որոշեց. Թոյլ տալ նոյն Կոնսիստորիային Գանձակի գաւառի Գառնակեր գիւղացի Կարապետ Բալոյեանին ընդունել հոգևոր կոչման մէջ և ձեռնադրել նրան քահանայ Գառնակեր գիւղի համար.